

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

(Ք.Ա.Դ.Ռ.Ա.Ս.Գ.)



ԵՐԿՈՒ ԴԻՒԱՆԱԿԱՆ ԹՂԹԵՐ

ՑՈՎՀԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳՈՎ, ԵՒ ԱՆՈՒՑ ՎԱՀԻԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Յովհան կաթողիկոս՝ իր Պատմութեան մէջ մեզ կը ներկայացնէ երկու գիւանական գրութիւններ, որոնք ոչ միայն քաղաքական, այլ և Հայոց եկեղեցական պատմութեան համար առաջնակարդ կարեւորութիւն ունին.

Ա. - Նիկողայոս Պատրիարքի բույր առ Յովհաննես կարողիկոն Հայոց¹:

Բ. - Յովհան կարողիկոսի բույր առ կուտանշին կայոր²:

Պաշտօնական այս երկու թղթերը պէտք

է յունարէն բնագիր մ'ունեցած ըլլան³, երկ անձնիք վատրական են:

Գալով այս խնդրոյս, աննպաստ կարծիք մը յայտնուեցաւ սոյն Հայկական ձեւարակին նախորդ բանախօսութիւններէն միոյն մէջ:

Դիտել բորուեցաւ որ Վիրք՝ Նիկողայոսի նամակին մէջ՝ ստորակարգեալ կը նշանակուին Հայոց կաթողիկոսին՝ Յովհաննէսի⁴, մինչդեռ անոնք երերդար առաջ արդէն բաժնուած էին Հայոցսէ:

1. Տպ. Երևանէմի, Գլ. ՄԴ. էջ 333.

2. Յազագ գրելի Նիկողայոսի Պատրիարքին կոստանդնուպոլսյ նամակ առ Յովհաննէս կաթողիկոս, և նոր են գրելոյ և կոստանդնի կայոր»:

Նամակի սկզբնաւորութիւնը.

«Ա սեմականի և աստուածաբիրի Ծոգեւը Ծըր՝ Տեան և յաէս սերեկ եղօր մերու Ցավէաննէս կաթողիկոսի Հայոց մեծոց՝ ի նկանայուս ուղրութեամբը Աստուած յարթակապուտ կոստանդնուպոլսի և ի ծառայէ ծառայից Աստուեց Տիրամը խնդակ»:

3. Գրեց Բայրը առ Կոստանդնի կայոր օրինակ զայս. «Գիրաբուն և ինցիսակալ կայոր Հայոցմայեցւց օգոստոս կոստանդնուպոն, յաստուածուա պատկան և պերճաց մէծ և բարեամբ թագաւոր տիգզերաց»։ և այն։

4. Բարքանդինի գրայ թագաւորող արշակունիները հաւանորդէ Հայկիք լինեցիր:

Այս կտաի նկատմամբ կոստանդնի գիրքինուժէ Հայութաբրական տեղեկութիւն մը կու տայ» Տօ ադմինիստրանու ուժի գլուխոյ մէջ։ (էջ 185, ըստ պատրիարքեան Պանիք)։

Նա կը յէց Եւրոպական արքունեաց մէջ պաշտօնայ մը՝ որ կը կու տայ Հայոց մարգարաց, «Թօօծօրս տօն արքանց արդյունուց լուսաւուած առաջարկան Պանիք»։

Վերոյիշեալ Թէոփորը Կ'ապրէր Լւսն իմաստաէրի ժամանակ, Գալով Հայոց թարգմանեալ իշխանութեան, կը թուր Բէ անոնց զիսպամական մէջինակութիւն մ'ունէին, Լւսն իմաստաէր, օրինակ իմ, Աւուտուք անուամբ ներթանիք կ'ուզէ Հայաստան դրկել. Քէղորոս, Հայոց թարգմանը, արգելք կը հանդիսան և յաշոր անոր տեղ ուղարկել տալ ուրեմն պաւատակն ըն՝ կոստանդնի անուամբ։

5. Բազմավակէպ, 1806, սեպտեմբեր, էջ 403։

6. «Յազագ Հայոց, Վրաց, Աղոաց և Աղուամից միահամու քոյ հաւատացեալ հօտիցից»։

Այս բացարարութիւնը կ'ընէ Նիկողայոս, պատրիարք կոստանդնուպոլսյ, խօսելով առ Հայոց Կաթողիկոսն։ Յիշաբա ցիէ մը գուարին է հաւատալ՝ որ յայն Հայոց պատոց այստեղ անզգոյշ առատածնենութեամբ վարուած ըւայ կաթողիկոսի տիգզունիքոն հետ, և ի պէրքան ընթերցող կը կասկածի որ մէ՛ գուցէ նամակը, կամ չէթ այդ բացարարութիւնը, ազգամու ընդորինակողի մը յաւելուածն ըլլայ։ Բայց այս կասկածը կը փարատի ևթի յաջորդ խօսերէն յառաջ եկած մէկնութեան ուշ շնէնք, ինչ որ պիտի անսննց յետոյ։

Միւս կողմէն ընդգծեալ և ինդրական բացարարութիւնը մեացարական ո՛ւ է թէրութիւն չունի՛։

Ներկայիւա պիտի ջանանք ապացուցա-
նել՝ թէ Ներդայսոի համակի առ Յովհան-
նես կարողիկու և Յովհաննես կարողիկուի
համակի առ կատանդին վաւերական թըզ-
թէր են, և կարող ենք վստահաբար գոր-
ծածել զանոնք:

Վաւերականութեան ինդիրը քննելի է,
այն ծանրակշիր հետեւութեանց համար՝
զորս կարելի է ստանալ այդ երկու կա-
րեւոր թղթերու բովանդակութենչն:

Ա.

Դիտելի են, Ներդայսու պատրիարքի-
նամակին մէջ, հետեւեալ կէտերը.

1. - Նամակի շարժափթն և ոգին՝ դի-
տանագիտական է, և ոչ աստուածաբանական։
Պօլայ հայրապետը պատերազմի կարգա-
դրութիւններ կ'ընէ, քրիստոնեայ ազգաց
քաղաքական յարաքերութիւնները քարտո-
ւելու կ'աշխատի¹, Ավահովապէս այդ պի-
տի ըըլլար զարդունքը այն կեզծողին, որ
նպատակ ունէր Հայոց կաթողիկոսի եկեղե-
ցական հեղինակութիւնը մեծցնել։ Միւս
կողմէն թէ ինչո՞ւ հայրապետ մը քաղաքակա-
նուրեամբ կը զրադի, զարմանալի երեսոյ

մ'է դա, որուն մեկնութիւնը չկայ Յով-
հան կաթողիկոսի քով, բայց կը գտնուի
պատմութեան մէջ, որ զայն լուսաբանած
ժամանակ, ապացոյց մը կու տայ թղթոյն
վաւերականութեան։

Սա ճիշդ այն Ներդայսուն է, - թիւ-
զանդական պատմութեան մէջ հոչակաւոր,
- որ զերթիմիոս հայրապետ կրօնաւորնե-
րու ձեռքով գանակոծել տալով՝ Աղեք-
սանդր Աղշակունուոյ շնորհիւ զահ ելաւ
(912), Պերփեռութէնի խնամակալն եղաւ
(913), կայսր օծեց զիոնմանոս (920), և
երերոտասան տարի հայրապետութիւն ընե-
լէ վերջ՝ մեռաւ 925ի մայիս 17ին, երբ
միասին կը թագաւորէնի թումանոս Լեկա-
րենոս և կոստանդինի Պետքուութէն։

Ինչո՞ւ ուրեմն Ներդայսու Հայաստանի
բաղաքական գործերով կը զրադի։ որով-
հետեւ ինքն էր Պերփեռութէն կայսեր ինա-
մակալը, տէրութեան գործերու վարիչը,
իրապէս կայսրը։

2. - Նամակը, թէպէտ շատ համառու,
այնուհանդերձ յունարէնէ թարգմանուած
ըլլալու հետքեր կը պարունակէ։

Ահաւասիկ իր սկզբանաւորութիւնը.

« Վահակ, ասկանաւորութիւնը։

« Վահականի, աստուածասիրի և հո-

« Ներդայսու կ'ըսէ. « Կարծեմ ոչինչ զանիսու է ի բնի, տէր իմ, ի բոյց յաստուածաբրութիւնէր յոյժ արամու-
թիւն և անպական ցաւը սրաց մերց յազար Հայոց
և Աղյաց և Աղուանից միահամուռ գոյյ Բաւատա-
ցեալ հատիկ։ »

Ցես այսուն յոցնակի եւը դրծածելու, Ներդայսու
կ'ըսէ. « Զի թէպէտ մարտով մեկուսի եմը, և ազօտ ոչ
տեսեալ զգանք հատի ծերոյ»։ այս եզակի եւը,
նախորդին հետ աններգաշնակ, ընդորնակող սխալ մը
կասկածէլ կու տայ։ Գէտ է դիմէլ նաև որ նակա-
նարար կը սպասուէր լսել « միահամուռ թեզ Բաւատա-
ցեալ հատիկ»։

Կարեկի լէ՝ ուրեմն ննթագրել որ նախական քնա-
զիրն անէր՝ « միահամուռ ի Փաւատացեալ հատիկ»։
ուսից յառաջ եկած ըլլայ, նոյն իսկ ակամայ, ինդրա-
կան քացարտութիւնը. թիւզանդիոն ըլլուր քրիստութե-
այինը պաշտամնը կը համարէր ինքինից, անոնց ի
քրիստոս Բաւատացեալ ըլլալուն համար, ոչ եթէ
Հայոց կաթողիկոսին համեր ըլլալուն համար, Հա-
մաքրիստոնէական զացմուն արտայայտութիւն մը կը
պաշանչուէր գերայիշեալ զիրքին մէջ։ Դիմուի նաև որ

կը յաշորգէ, երբ Հակաղութիւն, յիշառակութիւնը՝
« Սատակենու ինմայէլեաթ ընակաւացն »։

Այսպիսի մեկնութիւն ծը սական պէտք ենց մերձեւ,
սրովկեան յաշորգ պարբերութեան մէջ որոշակի կ'ը-
սակի. « Քոյոցդ հօտից, Հայոց, Արաց, և Աղուա-
նից»։ Աղլուր. « Եւ արդ պար է ձերում սրբաթեանդ
քրիստուն ի քրիստու և թղթով և պատգամօց և պայկսկո-
պոսօք և քահամայիւր և որովզ արամք գտն գոր-
ծել, և ի բաց ի միջոց բանալ զար հականակութիւնս
ուցու։ Աղյաց և Աղուանից».

Կաթողիկոս մը, որ իրաւունք ունի եպիսկոպութեր
և ցահանչեր ուղարկելու և Աղյուր և յԱղուան, ի-
րաւունք ունի զանոնք իր հօտիցը ընկատելու.

1. Ապաքեցաց թուղթս առ կրտոպակատող, և առ ա-
ւազն Աղիսազաց, իրաւունք առ ի լսել իրաւուցից ձե-
րոց և մոռանալ զըն միմեանս հարուց, և նայել ի սէր
և ի միաքանոնթիւն և ի հաջու խաղաղութիւն ընդ մի-
մանս և ընդ Հասարակ իշխանս Հայոց և Աղուանից և
մախանալ միարունք և մաթունք ընդգէմ ամբարիչտ
թշմաւույթ Ապուսիմայ, զի մի՛ հասարակ ենք կո-
րուս եղից, և որ մէջ ձեզ այլ նու մերժաւորց պա-
զաց սասանումն քերցի»։

գեւոր հօր» : — Բնականաբար ընդգծեալ րառը՝ ի սկզբան վսեմ բատեր սիրոտ հայ զրիչ մը կ' էննթազրէ, և պաշտօնական գոյն չունի. բայց երբ յունաքն բնազրին մէջ Նեթաօւօւ բառը ենթադրենք, որ կը նշանակէ թէ բարեպաշտ, և թէ արքունական, վսեմ, վեհափայչ, եղելութիւնը կը պարզուի . Նիկողայոս պատրիարք պէտք էր գրած ըլլալ.

« Բնականապաշտի, աստուածասիրի, և հոգեւոր հօր», — Կաթողիկոսի յարմար մակողիներ, — բայց թարգմանիչը յունաքն բառը իր երկրորդ նշանակութեամբ գործածած է:

3. — « Եհաս ի վերայ զառն տագնապ չարչարանաց և նեղութեան ի Աստակինոս խմայելեան բռնակալացն » : Աստակինոս բառը, ամբողջ ձեւովն արդէն՝ յունական, Սիրակոսա քաղաքին անունէն ելած է . Թոյներ, միշտ ուազմական յարաբերութեանց մէջ ըլլալով Սիրակոսայի Արարեներուն հետ, իրենց համար ընդհանրացած նշանակութիւն մ'ունէր այդ անունը, մինչ Հայերը՝ հարաւային, հագարացի, խմայերացի բառերը սովոր էին գործածել.

4. — Թէպէտ կ'ըսուի « Հայոց, Վրաց և Աղուանից միահամուռ ցոյդ հաւատացեալ հօտից », բայց կարելի չէ եղարկացնել թէ նամակի գրողը՝ Հայոց կաթողիկոսի հեղինակութիւնը մեծնելու դիտակտոն ունեցած է, կամ թէ նոյն ժամանակին՝ Հայոց և Վրաց մէջ եղած եկեղեցական շփոթութիւնց մոռցուած ըլլան, զի թիչ վերջ, նոյն նամակին մէջ, կ'ըսուի.

« Զիրացանչիւրոց զիրատուն յիրացանչիւրան ընձեռածիք, որպէս և վայելի իսկ ձերում սրբութեանդ, զի յառաջազոյն իսկ ի կարգս քահանայապետութեան իւրացանչիւր որ հաստատեցի » :

Ոչ մէկ բացատրութիւն աւելի յատկանշանական չի կրնար ըլլալ նոյն դարուն նկատմամբ՝ քան ի մէջ բերուածը : Կոստանդնուպոլսի հայրապետը ոչ միայն եկեղեցական կունենք կ'ակնարկէ, այլ նաև փափկանկատ զգուշաւորութեամբ մը՝

կը յանդիմանէ Հայոց կաթողիկոսը; և կը յորդորէ ուրիշին իրաւունքները ճանչնալ, կ'երեւի թէ ինչպէս Բազրատունից քաղաքականորէն զերիշխանութիւն ստացեր էին վրաց և Աղուանից վրայ, հայ կաթողիկոսն ալ, այդ եղելութեան հետեւանըով, ստացեր էր անոնց վրայ առաւելութիւն մը՝ զոր կ'ընդունի նաեւ Պօլոյ պատրիարքը. բայց պէտք է հայ կաթողիկոսը զեղծած ըլլայ այդ հանգամանքէն, խոնարհեցնելու ու ճնշել ջանալով վրացիները, ու զանոնց Պօլոյ պատրիարքին բողոքելու հարկին մէջ դրած :

Արդ, գրութիւն մը, ուր Հայոց կաթողիկոսի հեղինակութեան աննպաստ ակնարկներ կան, չէր կրնար հայ ազգամոլի մը կեղծիքն ըլլալ :

Ե՞րբ գրուած է Նիկողայոսի նամակն առ Յովհաննես կաթողիկոս :

Նիկողայոս մեռած է 920ի մայիս 17ին. վերոյիշեալ նամակի գրութեան իրը ժամանակաբական վերջին սահման կարող չենց 920ը դնել. պէտք է հինգ տարի եւս նուազեցնել . Ռումանոս Ակարենոս կայսր եղաւ 920ին, և իսկոյն Պերֆեռուսէնի խնամականները հալածեց արքունիքն : Ռւբեմ 920էն յետոյ՝ Նիկողայոս կարող չէր կայսեր կողմէն նամակ գրել, առանց Ռումանոսի յիշտատակութիւնն ընկլու, և մանաւանդ՝ իրը բացարձակ տէր՝ հրահանգներ դրկելու :

Միւս կողմանէն նամակը չի՝ կրնար 913 թուականէն առաջ գրուած ըլլալ, — վասն զի Պերֆեռուսէն այս թուին գահ ելաւ, ինամակալներու ձեռքին տակ, — ուրիմ Նիկողայոսի առ Յովհաննէս կաթողիկոս նամակը՝ գրուած է 913-920:

Բ.

Դեռ աւելի վստահարար կարող ենք շեշտել՝ Յովհանն կարողիկոսի առ կոստանդնուպոլսի վաւերականութիւնը :

Կը պարունակէ այնպիսի ակնարկութիւններ՝ զորս պիտի չկարենայինք ըմ-

բրոնել՝ առանց պատմական ճշմարտութիւնները օգնութեան կանչելու:

1. — Այստեղ կ'ըսուի. « Թագաւորք տիկներաց ... երկնացեղի ինձ դասուց համեմատք »: Ինը թիւը գոյութեան ի՞նչ պատճառ ունի այստեղ, երբ նամակը՝ միայն կոստանդինի Գերիքիումէնի ուղղուած է. — ի զուր է նամակին մէջ փնտոել. պատմութեան պէտք է զիմել:

Որուանու Լեկարենոս, երբ կայսր եղաւ, 920ին, մի առ մի կայսր հրատարակեց իր որդիները. Այսպէս թիւզանդական պալատին մէջ կային հինգ ինքնակալներ, որոնցմէ շրու՝ ամուսնացած. հետեւապէս պալատին մէջ կային ինը կայսերական անձինք. « Երկնացեղիկ ինձ դասուց համեմատք », ի՞նչպէս կ'ըսէ Յովհան կաթողիկոս:

2. — Նամակը յիրակի անվաւերականութեան երեւոյթ մ'ունի, ըստ որում ուղղուած է առ կոստանդին, որ միայն իր վերջին տարիները, (944-959) միայնակ թագաւորեց. բայց այս՝ յայտնապէս յառաջ կու զայ ձեռազրական պակասէ մը: Եւ յիրակի պէտք է զիմել որ յետ մէկ անձի մը ուղղելու խօսքը՝ յանկարծ կը սկսի յոգնակի ձեւը գործածել.

« Քերարուն և ինքնակալ կայսր Հովովայեցոց օգոստոս կոստանդիանոս, յաստուածուստ պատկեալ և պերճացեալ միծ և բարերազգ թագաւորք տիկներաց, աստուածասէր և բացեպաշտք, ի հանդիսի կենաց՝ հասարակաց լուսաւորութեանց վերակացուք, և հանուրց եղելոցս նշարքա խաղաղարաք ... ողջոյն ձեզ և խաղաղութիւն ... անյաղթ և ինքնակալ և աստուածապակեալ թագաւորացդ ... եղիցի գնալ ձեզ », և այլն:

Անտարակուսների է ուրեմն՝ որ ընդօրինակողաց անփութութեան շնորհի է, որ հետազոյ նամակը զուրկ է պաշտօնական ձեւէ և կայսերաց անուններէն, գոնէ անտեղի է ենթադրել՝ որ Յովհան կաթողիկոս՝ միւս կայսերաց անունները կ'անգիտանար:

3. — Նամակին մէջ, յետ յոգնակի ձեւը

գործածելու, յանկարծ կ'ըսուի. « Աստուծոյ սպասաւոր և մեզ ի բարիս բարեցաւ պարտ և ինքնակալ ցրիստոսապակեալ, կայսր Հովովայեցոց ի ձեզ հային »:

Նկատելով եղակիի և յոգնակիի այդ անկապ խառնուրդը, և միանգամայն այն պարագայն՝ որ Ռումանոս ինքնինքն և իր որդիքները կը նկատէր ճշմարիտ ինքնակալ, և չէր հանդուրժեր կոստանդին Պերփեռութէնի՝ օրինաւոր կայսր Նկատուելու գաղափարին, կը տարակուսինց որ մի՛ գուցէ « Գրիստոսապակեալ կայսր Հովովայեցոց և բառերը յատուկ անուններու աղաւազումներն ըլլան. թերեւս Յովհան կաթողիկոսի նախնական բնագրին մէջ կային հետեւեալ անունները « Քրիստոփոս, Ստեփանոս, կայսր Ռումանոս¹ »:

Ապագայ ընդօրինակող մը՝ կայսր Ռումանոս « Հովովայեցի կայսր » բարի յունական ձեւով գործածութիւնը կարծելով՝ թարգմանած է զայն, և անոր հետ նաեւ՝ Քրիստոփոս և Ստեփանոս բառերը. այսպէս տուեր է մեզ՝ « Քրիստոսա-Պատիկեալ կայսր Հովովայեցոց » ձեւու:

Այլապէս անհնապին պիտի ըլլայ մեկնել (եթէ ոչ պակաս մ'ենթազրելով) թէ ի՞նչպէս յետ « կայսր Հովովայեցոց » ըսելու՝ կը յաջորդեն հետեւեալ բառերը. « Խորհուրդ խօսողաց ի ձեզ հային ... « ի հովանի թեւոց ինքնակարացից », և այլն:

Ե՞րբ պէտք է գրած ըլլայ Յովհան կաթողիկոս՝ իր այս նամակը:

Ոչ կանուխ քան 920, երբ Լեկարենոս թագաւորեց, ոչ ուշ՝ քան 944, երբ Լեկարենի ընտանիքը զահընկէց եղաւ:

Առաջին եզրը կարող ենց նոյն իսկ աւելի մերժեցնել, գրութեան թուականը դնելով ոչ յառաջ քան 925, զի 924ի գեկտեմբերին՝ կոստանդին և Ստեփանոս կայսր հրատարակուեցան. Երկրորդ եզրն ալ կարող ենք յառաջ բերել մինչեւ 931,

1. Լեկարենի որդիքներն էին կոստանդին, Քրիստոփոս, Ստեփանոս.

զի այս թուականին՝ Ծոռմանոսի Քղիսոու-
փոս (կամ Թրիստափոր) որդին մեռաւ .
ուրեմն Յովհան Կարողիկոսի թուղթն առ
կոստանդին՝ գրուած է 925-931:

Այսպէս կը համենց մենց հետագայ
եղակացութեան:

1. - Յովհան Կաթողիկոսի ի մէջ բե-
րած դիւանական թղթերը՝ ոչ եթէ յաւե-
լուածներ են, այլ մասն կը Կազմեն պատ-
մութեան բնագրին, բայց զրչազրական ա-
ղաւազմանց ննթակայ եղած են:

2. - Հայոց եկեղեցական հեղինակու-
թիւնը, քաղաքականին հետ աշխարհակա-
լութեան ելած՝ ոչ միայն առաւելութիւն
մը ձեռք բերած էր Վրաց և Աղուանից
Նկատմամբ և չէր սոսկ primus inter
pares, - ինչպէս կը համարի Գեղեցք, -
այլ նաեւ անոնց իրաւունքներուն եւս սի-
րանալու փորձեր կ'ընէր:

3. - Հայոց մանը թագաւորները, ի-
րենց իշխանութեան նախանձախնդրու-
թեամբ՝ հաւասարակշռութիւն մը յառաջ
բերած էին և իրարու հեղինակութիւնը
սահմանափակած. այս պատճառու Հայոց
Կաթողիկոսը միայն կը մեար իրեւ Հա-
յատանի ընդհանուր իշխան, միութեան
կեղրոն, կապ մը՝ ոչ միայն Հայոց թա-
գաւորին և նախարարներուն, այլ նաեւ
Հայոց, Վրաց, Աղուանից իշ-
խաններուն միշեւ:

4. - Հայոց և շրջակայ ազգեր ընդհա-
նուր դաշնակցութեան մը կազմակերպու-
թիւնն ունէին, քրիստոնէական ովով կա-
պուած, և նախագահ ունենալով թիւզան-
դիոնը, որմէ կու գային կարեւոր հրա-
հանգները՝ առ թագաւորն Հայոց: Այդ
շարժառիթը պէտք չէ մոռանալ՝ երբ թա-
գարատունեաց շրջանի քաղաքական դէպրե-
ռը ըննութեան կ'առնուին:

Դժբաղարար այնքան սակաւ են, մեր
պատմչաց մէջ, պաշտօնական հարազատ
թղթեր՝ - իրենց դարը արտայատող, -
ինչպէս են անոնց՝ զորս Յովհան Կաթո-
ղիկոսի մէջ կը բերէ:

Հ. Կ. Տ. Սաւանեաւ

ՆԱԽՆԵԱՑ ՆՈՐ ԾԱՄԿԱՆՈՒՆ ՄԸ

Մեր Ս. Ղազարու մատենազարանին
թիւ 1371 տաղարանին վերջին էջին մէջ՝
հետեւեալ նորագիր յիշատակարանը կ'ըն-
թենունց. « Ասացաւ սակաւ քանս ումեմն
մեղաւոր և անարժան ծառայէ կաֆացի
Դին. Ժձն. Էջի. ԲՄՍ. Զթթ. Է թվն
ՌՂՋ (1647): » Յիշատակարան կցուած
է տաղի մը՝ որ սա խորագիրն ունի. « Աւ-
միմն մեղաւորի ասացեալ ըստ իւր ան-
ձին ». և կը սկսի « Խնայեան մարդասէր
Աստուած », և այլն. և տաղիս տուներուն
սկզբնատառերը կը յօդին. « Խայիկ անար-
ժանի երգ ». այս լոյս կու տայ մեզ թէ
վերոյիշեալ Դին ... և այլն. ծածկանունը
պէտք է Խայիկ ընթենուլ, բայց թէ ինչ-
պէս:

— Այդ տառերը Դին իրը թուանշան-
ներ պէտք է նկատել. Դ = 4. Ն = 400.
Տ = 4000. (Միարոր, Հարիւրաւոր, Հա-
զարաւոր), երկրորդ՝ Փ = 10, Ճ = 100,
Խ = 1000. (տասնաւոր, Հարիւրաւոր,
Հազարաւոր), և այլն: Ինչպէս կը տես-
նուի՝ նախորդին մէջ կը պակսի Գին տաս-
նաւորը որ է 40 = Խ. Երկրորդին մէջ 10
միաւորը որ է 1 = Ա, երրորդին մէջ 7ին
հարիւրաւորը 700 = Զ, չորրորդին 2ին
տասնաւորը 20 = Ի, հինգերորդին 6ին
տասնաւորը 6 = Կ. պակսած տառերը ի-
րարու կցելով՝ կ'ունենանց « ԽԱՂՋԻԿ »
անունը:

Հ. Մ. Պատուրեաւ